ՄՈԿՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ (1915թ. մայիսի 15 - հուլիսի 15)

ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

«Եթե կուզեք բախտորոշ ծառայություն մատուցանել ձեր ազգին, սորվցրեք անոր, ամեն բանե առաջ, հավատալ իր սեփական բազուկին, որն ավելի զորավոր է, քան կարող են կարծել իր արտաքին թշնամիները. Վանը հավատաց ու հաղթեց»:[1] Սա Գ. Նժդեհի խոսքն է, ասված 1930թ.՝ Վանի հերոսամարտի 15-ամյակի առթիվ: 1915թ. Հայոց ցեղասպանության արհավիրքի մեջ ծառս եղավ Վանը, Վասպուրականի հայությունը: Մայիսի 27-ին հրապարակվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի ողջույնի կոնդակը՝ ուղղված վասպուրականցիներին:[2]

Վանի նահանգի 14 հայկական գավառների շարքում առանձնահատուկ ուշադրության է արժանի Մոկսը: Թերևս այն պատճառով, որ Վան-Վասպուրականի այս փոքրիկ գավառակը ոչ միայն զերծ մնաց զանգվածային կոտորածներից, այլև մեծապես նպաստեց Վանի ապրիլյան հերոսամարտի ռազմաքաղաքական, վարչական ու տնտեսական վիճակի կայունացմանը: Այդ առումով Հայոց ցեղասպանության պատմության համար չափազանց կարևոր են նաև Մոկսի թողած դասերը, մանավանդ որ՝ առ այսօր այն մեր պատմագրության կողմից չի արժանացել պատշաճ ուշադրության:

1915թ. հունվարից սկսած Վասպուրականի բազմաթիվ հայաշատ գյուղեր ենթարկվեցին թալանի ու հրկիզման: Վերին Կարկառի (Վանի նահանգ) ողջ հայությունը, շուրջ 3000 մարդ[3], ինչպես նաև հարևան Բիթլիսի (Բաղեշ) նահանգի Ստորին Կարկառի 1938 տարագիրներ[4], հիմնականում ապաստան գտան Մոկս, Գավաշ ու Հայոց Ձոր գավառներում:[5] Զանգվածային կոտորածների ալիքն աստիճանաբար ծավալվում էր դեպի Վասպուրական: Տարոնի, Բիթլիսի դեպքերից հետո Վանի նահանգի հայության բնաջնջումն ու հայաթափումը կնշանակեր վերջնականապես կոտրել արևմտահայության դիմադրության ոգին՝ Արևմտյան Հայաստանի հայկական հոծ բնակչություն ունեցող վայրերում: Վանի ինքնապաշտպանությունը, միաժամանակ ապահովելու էր քաղաքի, ապա և, փաստորեն, նահանգի ու նաև հարակից հայկական շրջանների անվտանգությունը: Վանի հաղթանակի պատմական նշանակությունն էր այդ օրերին փաստում Միքայել Վարանդյանը: Նա, մայիսի 10-ին, խորհրդանշական վերտառու-

թյունը կրող «Երեք թվական. 1895,1905,1915» հոդվածում գրում էր. «Հոգեհանգիստներ են կատարվում այսօր նահատակների թարմ դամբարանների շուրջը և միաժամանակ ցնծության մի ճիչ է անցնում հազարավոր արձագանքներով հայ աշխարհի վրայից, մի ցնցող ու խանդավառող ավետիս՝ Վանը գրավված է»:[6] Վանը հարկադրեց նաև խոսել ռուսական բարձրաստիճան գործիչներին, որոնք ելնելով քաղաքական նկատառումներից, շուրջ ինն ամիս լուռ էին հայկական կամավորական շարժման նկատմամբ: Պետական Դումայի հուլիսյան նիստերում, ցավոք Վանի ողբերգական նահանջից հետո արդեն, դրվատանքի ու հիացմունքի խոսքեր էին ասում արտաքին գործերի մինիստր Սազոնովը, կոմս Բոբրինսկին, Մարկովը: «Հայերը ենթարկվում են անլուր հալածանքների, որը սակայն չի ընկճել նրանց ոգին, - նշում էր Սազոնովը, - հայկական խմբերը արիաբար կռվում են մեզ հետ իրենց բռնացողների դեմ: Վանում նրանք մի ամսի չափ դիմադրեցին թուրքերի գլտիին»:[7] Միքայել Պապաջանյանը վկայում էր հայ ժողովրդի բարձր հայրենասիրական զգացմունքների մասին. «Չկան զոհեր, - իր ճառում նշում էր նա, - որոնց առջև կանգ առնեին հայերը այս մեծ պատերազմի ժամանակ»:[8] Վանի համահայկական նշանակության մասին է վկայում նաև այն, որ բացի հերոսամարտի կազմակերպիչներից, այստեղ էին կենտրոնացել արդեն մեծ համբավ ունեցող, ինչպես և ապագա նշանավոր ռազմական ու քաղաքական գործիչներ՝ Խեչոն, Քեռին, Համազասպը, Անդրանիկը, Վարդանը, Դրոն[9], Նժդեհը, Սիր. Տիգրանյանը (Վանի փոխնահանգապետ), Արտակ Դարբինյանը (նահանգային վարչության դիվանապետ), Մարգիս Արարատյանը, Համո Օհանջանյանը, Հրանտ Դալլիկյանը, Ավետիս Թերզիբաշյանը:[10] Ավելի ուշ Վան եկան Հովի. Թումանյանը, Ռուստոմը:[11] Հիշարժան է նաև, որ աշուղ Ջիվանիի որդին՝ Պարույր Լևոնյանը, Արամ Մանուկյանի՝ ռուսերենի թարգմանիչն էր:[12]

Մոսկի ու նրա գավառապետության յուրահատուկ կացությունն անմիջականորեն կապված է Վանի ազատագրումից հետո (Մայիսի 6) նահանգում տիրող ռազմաքաղաքական իրադրության հետ:

Նախ, ռուսական հրամանատարությունը՝ գեներալ Օգանովսկին, Վան մտած ռուսական բանակի հրամանատար, գեներալ-մայոր Նիկոլանը, Արամին նշանակելով Վանի նահանգապետ, շեշտում էին մի շարք հանգամանքներ. 1. նորաստեղծ վարչակարգը ժամանակավոր է, 2. այն ռազմական բնույթ ունի, 3. կազմվելու է միմիայն հայերից և հենվելու է հայ երկրապահների վրա, 4. Արամը նահանգապետ է հաստատվում այն պայմանով, որ ենթարկվի երկրապահ գորքի ապագա հրամանատարին և 5. նրա միջոցով պետք է կատարվեն զինվորական իշխանության բոլոր կարգադրությունները:[13] Այն, որ նորաստեղծ ռազմականացված բնույթի վարչությունը (հանդիպում է նաև օգնության կոմիտե - Վ. Մ.) Վանի նահանգում ունենալու էր իր ենթակա նմանատիպ մասնաճյուղերի ցանց, միանգամայն պարզ է: Միաժամանակ, մեր կարծիքով, Արամ Մանուկյանի՝ որպես հեռատես քաղաքական գործչի տաղանդը կայանում է նրանում, որ նա, շրջանցելով իր լիազորությունների սահմանը, հաշված օրերի ընթացքում, նախաձեռնում է Վանի նահանգի 14 գավառապետությունների հիմային-քաղաքացիական վարչակարգի կարգավիճակ, ձևավորում էր փոխհամաձայնեցված գործունեությամբ օժտված ազգային կառույց՝ գործադիր մարմին, այլ խոսքով, իրականացնում էր նահանգի հայացումը: Ռազմա-

կան հաջողություններն առայժմ ընձեռում էին այդպիսի հնարավորություն՝ թուրքական կանոնավոր զորամասերը հեռացել էին Վանի նահանգից, հիմնականում կենտրոնանալով Մոսուլում ու մասամբ՝ Բիթլիսում, թեև դեռ պահպանվում էր քրդական հարձակումների վտանգը:

Համադրելով ժամանակի պատմական սկզբնաղբյուրները, իրավամբ թանկարժեք այդ պատառիկների օգնությամբ փորձենք ի հնարավորինս ամբողջությամբ վերականգնել Մոկսի հայության երկամյա հերոսապատումը:

Վանի ազատագրումից հետո կամավորական երկրորդ ջոկատը՝ Դլոյի գլխավորությամբ շտապեց Շատախ, ուր տեղի հայությունը դեռ Վանից առաջ ապստամբել էր և շարունակում էր դիմադրել թուրքական ու քրդական զորքերին:[14] Շատախը մաքրելով հակառակորդից Դրոն ձեռնամուխ եղավ Մոկսի ազատագրմանը: Նրա կարգադրությամբ Դալի-Ղազարի, Յապոնի, Տիգրանի հարյուրակներն ու Մարտիրոսի վաշտը՝ Գ. Նժդեհի հրամանատարությամբ արշավում են Մոկսի ուղղությամբ:* Մայիսի 8-ին Վանից դուրս եկած Նժդեհը մի շարք մարտերից հետո (Սիսյար-Դերե՝ 1915թ. մայիսի 11, Ավասի՝ մայիսի 12, Շատախ՝ մայիսի 13 և Սոկյանց՝ մայիսի 17) մայիսի 19-ին գրավում է Մոկսը:[15] Դրոն Մոկսի պաշտպանությունը հանձնարարելով Նժդեհին, իր զորամասի հիմնական ուժերով տեղափոխվում է Ախթամար, ապա Սուրբ Հակոբ:[16]

Մոկսի գավառակն ուներ 48 հայկական և նույնչափ էլ քրդական գյուղեր: Ընդհանուր առմամբ հայկական գյուղերում կային 721 տուն, 4459 բնակիչ:[17] Շնչերի թվով մեծ էին, հատկապես, Հաղին, Կայթանց, Առինջ, Տմնիս, Ծափանց, Գիտրիս, Սորս և այլ գյուղերը:[18] Ինչպես նշել է ժամանակի մամուլը. «Հայ ժողովուրդը ծիծաղը շրթներին, շշմած, գինովցած այդ անզոհ ազատությունից, անսահման ցնծությամբ դիմավորեց իր ազատարարին»:[19] Պակաս ոգևորված չէին նաև կամավորները, որոնք Բայազետից հետո առաջին անգամ մոխրի ու դիակների փոխարեն տեսնում էին շեն գյուղեր՝ թե իրենց բնիկ և թե փախստական բնակչությամբ: Մինչև կամավորների մուտքը Մոկսում զոհվել էին միայն վեց մարդ: Այսպիսի բացառիկ և անսպասելի ելքը բացատրվում է հետևյալ հանգամանքներով.

Առաջին – 1915թ. սկզբին, տեղի ունեցած մասնակի դեպքերը, ազատագրական շարժման աչքի ընկնող գործիչների՝ Վռամյանի, Իշխանի ձերբակալություններն ու սպանությունը, մի խոսքով՝ կուտակվող մեծ աղետը ոչ միայն չհուսահատեցրեց, այլ ընդհակառակը, Վանի փորձառու գործիչների (Արմենակ Եկարյան, Կայծակ Առաքել, Արամ Մանուկյան, Բուլղարացի Գրիգոր) շնորհիվ՝ կազմակերպված հունի մեջ դրեց ինքնապաշտպանության գործը: Հայ Հեղափոխական Դաշնակցության ջանքերով Վանի գավառներում կազմակերպվեցին զինվորական մարմիններ: Դրանք ուղղակիորեն ենթարկվում էին Վանի Զինվորական մարմնին, որը գլխավորում էր Արմենակ Եկարյանը (ռամկավար): Այդպիսի մի մարմին ձևավորվեց Մոկսում: Իրատեսությունը քաղաքականության շնորհիվ այն կարողա-

* Հարկ է նշել, որ ժամանակի պատմական սկզբնաղբյուրները չեն հիշատակում Նժդեհի անունը: Բոլորովին վերջերս մեր կողմից հայտնաբերված արխիվային փաստաթղթերը լույս են սփռում Նժդեհի 1914-1917թթ. մարտական գործունեության, ու նաև՝ Մոկսի հետ կապված մանրամասների վրա: (Տե՛ս ՊԲՀ, 2001թ., հ. 1):

ցավ Մոկսի հայ-քրդական համատեղ բնակչություն ունեցող շրջանում գոնե ժամանակավորապես պահպանել ավանդական նորմալ հարաբերություններ:

Երկրորդ - Դեռ 1896թ. համիդյան կոտորածների ժամանակաշրջանում, ինչպես և 1915թ., Մոկսում իր բացահայտ խաղաղասիրությամբ և հայամետ վարքագծով աչքի էր ընկել քուրդ ցեղապետ Մուրթուլան (Մոհթուլա) բեկը: Նա, իհարկե, եզակի բացառություն էր կազմում քրդական ցեղապետների միջավայրում, գիտակցում էր, որ թուրքերը քրդերին օգտագործում են իրենց հակահայկական ծրագրերում: Թուրքական իշխանությունները տեղյակ էին այդ մասին: Շատախի գայմագամը Վանի կուսակալ Զեկեթին գրում էր. «Այսօր Մոկսի գծով եկող ջոկատի հրամանատարը կտեղեկացնե, թե Մոկսի մյուդիր Մոհթուլան բեկը հայոց դիմումին վրա իրենց բնակարանի և ինչքի անձեռնմխելիությունը ընդունած և քրդերուն հրամայած է հրացաններուն ձեռք չտալ»:[20] Այստեղից պարզ է դառնում նաև այն, որ կոտորածի նպատակով Մոկսի շրջանն ուղարկված թուրքական ջոկատը հանկարծակիի եկած, ձեռնունայն ետ էր վերադառնում:

Երրորդ - Մոկսում ակտիվորեն գործում էին տեղական հայկական ինքնապաշտպանական ջոկատներ՝ Լաք խմբապետի գլխավորությամբ, որոնց ներկայությունն ու վճռականությունը, իրենց հերթին քրդական միջավայրում, ապահովում էին թեև անկայուն, բայց խաղաղությունը:

Չորրորդ - Վանի հաղթանակը և որպես դրա հետևանք՝ Դրոյի ջոկատի մուտքը հարևան Շատախ, ինչպես և հունիս-հուլիսին Զևանի, Սորբի ու Դատվանի երկու հաղթական ճակատամարտերը մեծապես նպաստեցին Մոկսի խաղաղ արդյունքին:

Եվ վերջապես՝ *հինգերորդ* - Վանի ապրիլյան հերոսամարտերի շնորհիվ կտրուկ փոխվեց թուրքական զորքերի հարաբերակցությունն ու շարժը: Դիլմանի մոտ ջարդված Խալիլ բեյը, որը շտապում էր Վանում միանալ Զեկեթի զորքերին, ընկավ շրջապատման օղակի մեջ, մի կողմից Բաշկալայի, Ռևանդուզի, մյուս կողմից՝ դեպի Բիթլիս տանող Մոկսի ու Շատախի շրջանում: Մայիսի 22-ին հայկական ուժերի հարձակումից հետո, Խալիլը նահանջեց Լեհնի հովիտը, որտեղից էլ սկսվեց վերջինիս անկանոն փախուստը: Խալիլ բեյի նախկին կորպուսը դադարեց գոյություն ունենալուց:[21] Սարգիս Արարատյանը Խալիլ փաշայի հապճեպ նահանջը բացատրում էր նրանով, որ վերջինս մտադրվել էր Մոսուլում կենտրոնացնել իր ուժերի մնացորդները. Զեկեթը թուրքական ուժի նոր կենտրոն էր փորձում ձևավորել Բիթլիսում: Հիմնականում այս ուժերով էլ թուրքերը ծրագրել էին պաշտպանել Ուրմիայից մինչև Զուլամերիկ ձգվող ճակատագիծը, ինչպես և Շատախ-Մոկս-Կարճկան և Խլաթ-Կոփ շրջանները: Մինչև մայիսի 29-ը Մոկսի լեռներում, հունիսի 8-ին Սպարկերտում, Կարճկանում տեղի ունեցած մարտերը ենթադրել են տալիս, որ Զեկեթին հաջողվել էր Բիթլիսի և Մուշի թուրքական ջոկատները միավորել Կարճկանում: Նպատակը՝ Վանա լճի երկու ափերով շարժվող հայ կամավորների և ռուսական զորքերի առաջխաղացումն ու միացումը կանխելն էր:[22] Դրեթե նույն մտահաղացումն էր հետապնդում նաև Խալիլը, որին օգնության էին շտապում Անկարայի դիվիզիան, Էրզրումի թերդապահ բանակի մի մասը, ինչպես նաև տխրահռչակ Մուսա-բեկի և շեյխ Աբդուլլայի քրդական հրոսակները:[23] Մայիսի կեսերին Վասպուրականի հարավային սահմանակից գավառներ, այդ թվում և Մոկս, ուղևորվեց Վանի Զինվորական մարմնի պետ

Արմենակ Եկարյանը: Նա հանգեց այն եզրակացության, որ հարավի ստրատեգիական կարևորագույն շրջանների՝ Շատախի, Մոկսի, Նորդուզի, Գավաշի և Հայոց ձորի պաշտպանության համար անհրաժեշտ է ևս հազար զինվոր:[24]

Այս բարդ ու պայթյունավտանգ իրավիճակում էին դիմակայում մոկաց ժողովուրդը և գավառապետությունը:

Մոկսի ազատագրումից հետո Վանի Նահանգային ժամանակավոր վարչության կողմից, ի թիվս մյուս գավառների, այստեղ ևս ձևավորվում է գավառապետություն:[25] Բաքվի «Արև» թերթի 1918թ. մի համարում այն ստացել է «Մոկսի կառավարություն» անվանումը:[26] Ի դեպ՝ թե ինչու էին գավառապետությունները ու նաև Վանի շրջանային վարչությունը կոչվում կառավարություններ, կարելի է հետևյալ կերպ բացատրել. ա) դա հետևանք էր Վանի հերոսամարտի ղեկավար գործիչների, նախ և առաջ Արամ Մանուկյանի հեռատես գործելակերպի, որոնք ռուսական հրամանատարության կողմից ստեղծվող զուտ ռազմականացված վարչակարգին աշխատում էին ազգային-քաղաքացիական նկարագիր հաղորդել (այս առումով լավագույն զուգահեռը կարող է լինել Հ. Ջավրիյանի՝ 1917թ. գործունեությունը Արևմտյան Հայաստանի Գեներալ-կոմիսարությունում), բ) այն պայմանավորված էր հայ ժողովրդի և նրա ազգային ղեկավար ուժերի կողմից ինքնորոշման մեծագույն ձգտումով, երբ պատերազմի հաղթական ավարտի պայմաններում Արևմտյան Հայաստանի ազատագրումը կարող էր իրականություն դառնալ, ուստի և շեշտվում էր ազատագրվող տարածքների հայկական պատկանելությունը, գ) առկա էր նաև սուբյեկտիվ գործոն, երբ առավել ազդեցիկ Դաշնակցություն կուսակցությունը, ի հակակշիռ Վասպուրականում ավանդաբար գործած արմենական-ռամկավարների, ընդգծում էր իր վարկն ու ազդեցությունը ոչ միայն այստեղ, այլ ողջ Արևմտյան Հայաստանում:

Գործունեության առաջին փուլում ռազմա-քաղաքացիական այդ մարմինների նպատակը խաղաղության և կայունության հաստատումն էր, ինչպես նաև Վանի հրահանգների իրականացումը: Երկրորդ փուլում, բարդ և բազմաբնույթ խնդիրների ասպարեզ գալու հետ մեկտեղ, միայն զինվորական մարմինն ի վիճակի չէր հոգալ դրանց մասին, ուստի և «մեկ-երկու գավառներում վարչական կազմը բարդ կերպարանք ընդունեց, ընդօրինակելով կենտրոնական կառավարության ձևը»:[27] Առաջնակարգ լուծում պահանջող խնդիրներն էին տեղական միջոցներով բանակի մատակարարման, ներքին դատական գործերը կարգավորելու, տուժածներին ու փախստականներին օգնելու, դիրքերը պաշտպանելու, դաշտային աշխատանքները վերսկսելու և այլ հարակից հարցեր, որոնք Մոկսում ևս «կառավարություն հիմնելու անհրաժեշտություն ստեղծեցին»:[28] Գավառապետությունների աշխատանքը վերահսկում էին Նահանգային վարչությանը ենթակա Գավառային վարչությունը և գավառական ոստիկանությունը: Ոստիկանության ամբողջ թիվը կազմում էր 360 հոգի՝ 40 տասնապետերով:[29] Մոկսի գավառապետ է նշանակվում Գրիգոր Նահապետյանը, տեղակալ՝ Կարապետ Ղազարյանը:[30] Ձևավորվում են հինգ մարմիններ. 1. *Գավառական վարչություն* – վարում էր գավառի ընթացիկ գործերը, միևնույն ժամանակ կատարում էր նաև դատական մարմնի դեր, 2. *Տնտեսական մարմին* – պարեն էր մատակարարում կամավորներին, ավերված հարևան գյուղերի գաղթականությանն ապահովում էր սննդամթերքով,

3. *Ոստիկանական կազմ* – իրականացնում էր գավառապետի և զինվորական պետի հրահանգները. 4. *Շրջանային ինքնապաշտպանության մարմին* – հոգում էր գավառի ինքնապաշտպանության գործը, զինում էր տեղացիներին,կամավորների հետ համատեղ զինյալ պահակներ էր դնում առավել վտանգավոր վայրերում, իր հերթին հսկում էր ներքին անդորրությունը. ավելի ուշ ձևավորվեցին շրջանային ինքնապաշտպանական մարմիններ. 5. *Գաղթականության խնամքի հանձնաժողով* - այն գաղթականությանը տեղափոխում էր առավել քարվոք, ազատ և անվտանգ վայրեր, հոգում էր ինչպես նորեկ, այնպես էլ հին փախստականների բոլոր հոգսերը, անգամ հող էր տրամադրում:

Մոկսում զգացվում էր, իհարկե, գործին քաջատեղյակ, հմուտ կադրերի պակաս: Մոլեգնող տիֆի պայմաններում առաջնահերթ էր դառնում բժշկական խմբերի ու դեղորայքի առաքումը Վասպուրական: Այդ մասին է վկայում Արամ Մանուկյանի «Ընդհանուր դիմումը», որտեղ մի շարք գավառների շարքում հիշատակվում էր նաև Մոկսը: Վանի կոչին արձագանքում է Ս. Էջմիածինը, Բաքվի «Եղբայրական օգնության կոմիտեն», Թիֆլիսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեն ու «Հայ բարեգործական ընկերությունը»: Վասպուրական մեկնած բժիշկների բազմամարդ խմբերում հիշատակվում է նաև Համո Օհանջանյանի անունը:[31]

Մոկսի գավառապետության երկու ամսվա գործունեության արդյունքում՝ այս փոքրիկ գավառակը միմիայն իր պահուստներով կարողացավ կերակրել 600-800 կամավորների և այդքան էլ գաղթականության:

Շարունակվող ռազմական գործողությունները, Բիթլիսի անկումը, մասնավորապես, չդադարող քրդական հարձակումներն ապակայունացնում էին ընդհանուր իրավիճակը: Հունիսի կեսերին Մոկսում վերսկսվեցին քրդերի հետ ընդհարումները: Վանում հրատարակվող «Աշխատանք» թերթը վկայում էր, որ «... վերջին սվինամարտ կռվի մը մեջ քրդերը կորսուցած են հարյուրի չափ սպաններ, որոնցմե մի քանիսը Մոկսի բռնապետերն են»:[32] Հավանաբար այդ ընդհարումների ժամանակ սպանվել է նաև Մորքուլա բեկը, քանզի դրանից հետո չենք հանդիպում նրա անվան հիշատակմանը: Հուլիսի 12-ին քրդերը հարձակվել էին Մոկսի վրա: Հայերի ինքնապաշտպանական խումբը ենթարկվելով հանկարծակի հարձակման, ստիպված հեռանում է հայկական կենտրոններից: Հուլիսի 13-ին Հաղին գյուղի մոտ՝ Կարմիր Կամուրջ կոչված դժվարանցանելի վայրում, քրդական խմբի հարձակման հետևանքով զոհվում է Մոկսի հերոսը՝ Ոգմեցի Լաբոն, իր 26 ընկերների հետ. դրանց թվում էին նաև Դրոյի գնդի հայ կամավորներից շատերը: Այս դեպքերի կարևորության մասին է վկայում այն, որ Արամն այդ մասին զեկուցում է գեներալներ Նիկոլաևին և Օգանովսկուն: Որպես պատասխան զինաթափվում է Աբդուլ-Ռիզակ քրդական գյուղը, իսկ նրա 300 հոգիանոց բանակը հեռացվում է Աբաղայի դաշտի իրենց գյուղերը:[33]

Մոկսի համեմատաբար խաղաղ կյանքն ավարտվում է Վանից ռուսական զորքերի նահանջով: Վանի մոտակա և հյուսիսում գտնվող գավառների գաղթող բնակչությունը շարժվեցին Վանից գաղթող բնակչության հետ միասին, մինչդեռ Հայոց Ձորի, Գավաշի, մաճավանդ Մոկսի ու Շատախի գաղթող բնակչությունը ուշանում էր և Վան կհասներ 3-4 օր հետո: Մոկաց ժողովուրդը ևս բռնեց նահանջի ու գաղթի ճամփան՝ «իր մինչ այդ անկորուստ երիտասարդների գերեզմանները դնելու Բերկրիի հովտում և Արա-

ռատյան դաշտում»:[34] Մոկսի և Շատախի հայությունը գաղթում էր Նժդեհի և Մեսրոպի վաշտերի պաշտպանությամբ:[35]

Ամփոփենք՝ շարունակվող հայկական ցեղասպանության, ռազմական ակտիվ գործողությունների բարդ, ողբերգական իրականության մեջ, Մոկսի հայությունը կարողացավ ոչ միայն երկու ամիս անկորուստ դիմակայել, այլև շատ կարճ ժամկետում ստեղծեց քաղաքացիական կայուն և գործող իշխանություն: Մեր կարծիքով սա է Մոկսի հայկական կառավարության հիմնական դասը: Հարկ ենք համարում նշել նաև, որ հետագա հետազոտման կարիք ունի Վասպուրականի 14 գավառապետությունների ամբողջական պատմության ուսումնասիրումը, ինչը, մեր համոզմամբ, կլրացնի ոչ միայն Վասպուրականի պատմության ուսումնասիրման բացերը, այլև որոշակի պարզեցում կբերի Վանի նահանգի բազմիցս քննարկված խնդրին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Մխիթարյան Օն. Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930:
[2] Մշակ. Թիֆլիս, 1915, 11 հուլիսի:
[3] Դարբինյան Արտ. Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 295:
[4] Արև, Բաքու, 1915, 25 հունիսի:
[5] Արսեն Ա. Կեորկիզյան. Վասպուրականի հերոսամարտը, Բեյրութ, 1965, էջ 52:
[6] Արեգ, Բաքու, 1915, 10 մայիսի:
[7] Արև, Բաքու, 1915, 23 հուլիսի:
[8] Նույն տեղում:
[9] Երամյան Հ. Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Ալեքսանդրիա, 1929, էջ 324:
[10] Աշխատանք, Վան, 1915, 13 հունիսի:
[11] Արմենիա, Մարսել, 1915, 28 հուլիսի:
[12] Դարբինյան Արտ. նույն տեղում, էջ 331:
[13] Մխիթարյան Օն. նույն տեղում, էջ 214:
[14] Արև, 1915, 6 հունիսի:
[15] ՀՀ ՊԿՊԱ, Հավաքածուների ֆոնդ, ֆ. 1, ց. 2, գ. 85, թ. 61:
[16] «Դրո», Երևան, 1991, էջ 45:
[17] *Արտակ Դարբինյանը նշում է 7500 թիվը*, տես՝ նույն տեղում, էջ 308-310:
[18] Ա-Դռ. Մեծ դեպքերը Վասպուրականում, 1914-1915, Երևան, 1917, էջ 17:
[19] Արև, 1918, 13 փետրվարի:
[20] Դարբինյան Արտ. նույն տեղում, էջ 308-310:
[21] Հորիզոն, Թիֆլիս, 1915, 29 մայիսի:
[22] Արև, 1915, 13 հունիսի:
[23] Նույն տեղում, 4 հուլիսի:
[24] Հուշեր Արմենակ Եկարյանի, Կահիրե, 1967, էջ 242:
[25] *Աղբյուրներում հաճախ հիշատակվում է նաև որպես կառավարություն, տվյալ դեպքում Մարգիս Արարատյանն այն կոչում է Վասպուրականի կառավարություն,* տես՝ Արև, 1915, 17 հունիսի:
[26] Արև, 1918, 13 փետրվարի:
[27] Նույն տեղում:
[28] Նույն տեղում:
[29] Մխիթարյան Օն. նույն տեղում, էջ 218:
[30] Աշխատանք, 1915, 13 հունիսի:
[31] Նույն տեղում:
[32] Հորիզոն, 1915, 5 հուլիսի:

[33] Նույն տեղում, 21-22, 24 հուլիսի:
[34] Դրո. Նույն տեղում, էջ 53:
[35] Նույն տեղում:

Резюме

Армянское Правительство Мокса
(15 мая – 15 июля –1915г.).

Ваан Меликян

В мае 1915 года, после освобождения Мокса, Ванское губернское временное управление, в числе других уездов, формировало здесь уездное управление, которое получило название Правительство Мокса.

Это объясняется тем, что руководители героической обороны Вана Арам Манукян, Арменак Екарян и другие старались придать национально-гражданский характер сугуво военизируемому управлению, создаваемому русским командованием.

В сложной и трагической действительности продолжавшегося Армянского геноцида и активных военных действий в Западной Армении, армянское население Мокса сумело избежать массовой резни, и в короткий срок создать стабильную и действенную гражданскую власть. После Апрельской самообороны это управление способствовало стабилизации военно-политического, административного и экономического положения Вана, благодаря чему и заслуживает особое внимание среди 14 уездов Ванской губернии.

Summary

The Armenian Government of Mocks
(The 15th of May –15th of July 1915)

Vahan Melikyan

After the liberation of Mocks in May 1915 the provincial provisional administration of Van like the other districts formed a local administration here, which was called Government of Mocks.

It account for the fact that the leaders of the heroic defense of Van Aram Manoukian, Armenak Yekarian and the others tried to give national-civil Character to the exclusively militarized administration creating by the Russian command.

In complicated and tragic situation of the Armenian genocide and active hostilities in Western Armenia, the Armenian population of Mocks could escape mass slaughter and in a short space of time create stable and affective civil power. After the April self-defense this administration contributed to stabilization of military-political, administrative and economic condition of Van. That is why it deserves a special attention among 14 districts of Van province.